

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/1

20 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Սուսաննա Մադինյանի 08.11.2012թ. դիմումով բերված գանգատը « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 25.04.2012թ. թիվ 2113936 ստուգման ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկման դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 18.04.2012թ. թիվ 2113936 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Սուսաննա Մադինյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 25.04.2012թ-ին կազմվել է թիվ 2113936 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ա/Ձ Սուսաննա Մադինյանի գանգատում մասնավորապես նշված է.

սույն թվականի ապրիլի 20-ին տուգանվեցի 175.000 դրամ՝ նախօրոք չտրամադրելով կատարված գնման գումարի ՀԴՄ կտրոնը: Ս.թ. ապրիլի 25-ին հարկային տեսուչների կողմից կազմվել է թիվ 2113936 ակտը, որն ինձ է ներկայացվել ապրիլի 26-ին:

Ակտով վճարման է առաջադրվել 150.000 դրամի տուգանք, որը պարտավոր էի երկու ամսվա ընթացքում վճարել բյուջե:

25.000 դրամ վարչական տուգանքը վճարել եմ ժամկետի մեջ, իսկ ստուգման ակտով առաջադրված տուգանքը՝ հունիսի 26-ին: Քանի որ բանկը սովորաբար երեք աշխատանքային օրվա ընթացքում է փոխանցում գործարքը, որի մասին ես տեղյակ չէի, պարզվում է, որ ակտի գումարը նույնպես վճարված է երկու ամսվա ժամկետի խախտմամբ: Արդյունքում, ակտով առաջադրված տուգանքը կրկնապատկվել է: Դրա մասին իմացա, երբ վերջերս որոշեցի լուծարել իմ Ա/Ձ-ն:

Պետք է նշեմ, որ գումար չունենալու պատճառով վճարումներս թողել եմ վերջին օրերին, սակայն խնդրում եմ աջակցել այս հարցում հաշվի առնելով, որ տուգանքի գումարը վճարվել է ժամկետի լրացման հենց վերջին օրը՝ հունիսի 26-ին:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ հաշվի առնել նաև իմ ընտանեկան կարգավիճակը՝ ամուսնուս մահից հետո երեխաների խնամքը լիովին մնացել է իմ վրա, ուստի վճարունակ չեմ և չեմ կարող վճարել տուգանքի կրկնապատկված մասը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Սուսաննա Մադինյանի և « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

« ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից 25.04.2012թ-ին կազմվել է թիվ 2113936 ստուգման ակտը, որով հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները խախտելու համար լրացուցիչ գանձման է առաջադրվել տուգանք՝ գումարով 150.000 դրամ:

Ստուգման ակտով առաջադրված գումարը, համաձայն «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ անդորրագրի, Ա/Ձ Սուսաննա Մադինյանի կողմից վճարվել է 26.06.2012թ-ին:

««-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն

կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. <Գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև՝ օրենքով սահմանված այլ եղանակներով: Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով>:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. <Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտը կազմվել է 25.04.2012թ-ին և Ա/Ձ Սուսաննա Մադինյանին է ներկայացվել /վերջինիս կողմից ստորագրությամբ ստացվել է/ 26.04.2012թ-ին:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտն ուժի մեջ է մտել այն Ա/Ձ Սուսաննա Մադինյանին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ տնտեսական դատարանի 11.10.2007թ. թիվ S-2595 վճռի համաձայն, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 86-րդ հոդվածով սահմանված կարգով մեկնաբանելով <Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի <ա> կետը, 29-րդ հոդվածի 1-ին մասը և 19-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանը գտել է, որ վճարային հանձնարարագրի վրա միայն վճարման օրը նշված լինելու պարագայում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հենց այդ օրն է համարվում կատարված վճարման օր և վճարային հանձնարարագիրը Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի <ա> կետի իմաստով համարվում է ակցեպտավորված:

ՀՀ տնտեսական դատարանի 11.10.2007թ. թիվ S-2595 վճռի դեմ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից բերվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 12.11.2007թ. թիվ 3-1828 (ՏԴ) որոշման համաձայն վերադարձվել է: Այսինքն, ՀՀ տնտեսական դատարանի 11.10.2007թ. թիվ S-2595 վճիռը ստացել է օրինական ուժ:

Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը գտնում է, որ <Հայթիզնեսբանկ> ՓԲԸ անդորրագիրը Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի <ա> կետի իմաստով համարվել է ակցեպտավորված և դրա վրա նշված վճարման օրը, այն է՝ 26.06.2012թ-ը, Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով համարվում է կատարված վճարման օր: Նշված հանգամանքը հիմք է հանդիսանում եզրակացության համար, որ <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը նույն հոդվածով սահմանված երկամսյա ժամկետում կատարվել է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Սուսաննա Մադինյանի անձնական հաշվի քարտից նվազեցնել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 25.04.2012թ. թիվ 2113936 ստուգման ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված մասը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ